ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը հայտարարում է մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 2024-2025 ուսումնական տարվա ընդունելություն

Ընդունելության 2-րդ փուլ՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցմամբ **(վճարովի),** առկա ուսուցմամբ:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 1-ից մինչև օգոստոսի 26-ը (ներառյալ), ժամը 09:00-17:30, հարցազրույցը՝ օգոստոսի 28-ին:

Ընդունելության դիմում-հայտը լրացվում է տեղում՝ Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնում:

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻՆ ԿՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ.

- բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
- ինքնակենսագրություն,
- 3 լուսանկար (3×4 չափի),
- հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),
- զինվորական գրանցման փաստաթղթերի պատճեն բնօրինակի առկայությամբ (1-4, 16-19 էջերի պատճեն),
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը բնօրինակի առկայությամբ,
- ստացած մրցանակների, վկայականների, դիպլոմների պատճենները՝ առկայության դեպքում,
- Ընդունելության ծառայությունների համար 5000 ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը: («Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ, ք.Երևան, Ալ. Մանուկյան 11, ՀՎՀՀ 01505821, ԱյԴի Բանկ «Վարդանանց մասնաճյուղ», Հ/Հ 11817065324000

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՖԿՍՊԻ Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժին:
Հեռախոս՝ +374 10 55 33 10 (164)
Էլ.հասցե՝ gayane.tamrazyan@sportedu.am